ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՎԿ/1-ՇՀԾՁԲ-15/4 ծածկագրով ՇՀ ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան, Կառավարական տուն 1,	26.10.2016թ.
մասնաշենք 4	ժամը 17.00

Հանձնաժողովի նախագահ Ա. Եղիշյանը նիստի ընթացքում հրապարակեց յուրաքանչյուր չափաբաժնում գնման առարկայի նախահաշվային գինը, այն է՝ 300.000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին, այնուհետև հանձնաժողովի նախագահին հանձնեց հայտերի գրանցամատյանը, ինչպես նաև ներկայացված մասնակցության հայտերը:

Նիստի ընթացքում արձանագրվեց, որ յուրաքանչյուր չափաբաժնում ներկայացվել է մասնակցության մեկական հայտ: 1-ին չափաբաժնում մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆորտունա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, 2-րդ չափաբաժնում՝ «Գեղամա Մեդիա Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Հանձնաժողովն իրականացրեց ներկայացված հայտերի առանձին գնահատում, ըստ որի՝

-ստուգեց Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի համապատասխանությունը ծրարները կազմելու և ներկայացնելու սահմանված կարգին և դրանք գնահատեց բավարար,

-ստուգեց բացված ծրարներում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և դրանք գնահատեց բավարար:

Հանձնաժողովի նիստում արձանագրվեց, որ Մարզերում հեռուստատեսային ծառայությունների ձեռքբերման ՏՎԿ/1-ՇՀԾՁԲ-15/4 ծածկագրով ՇՀ ընթացակարգի 1-ին չափաբաժնում մասնակցության հայտ ներկայացրած միակ մասնակից «Ֆորտունա» ընկերության գնային առաջարկը կազմում է 298500 /երկու հարյուր ինսունութ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնում մասնակցության հայտ ներկայացրած միակ մասնակից «Գեղամա Մեդիա Հոլդինգ» Ընկերության գնային առաջարկը կազմում է 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշեց հիշյալ Մասնակիցներին համապատասխանաբար 1-ին և 2-րդ չափաբաժիններում ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիշյան
հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեհրաբյան
Ա. Գասպարյան
ԳՀ քարտուղար՝ Հ. Օհնիկյան
Նիստն արձանագրեց՝ Լ. Բալդարյանը